ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ԱՐՄԵՆ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Քոչարյան.

ի պատասխան Ձեր 25.10.2024թ. հ.327-2024թ. գրության՝ տեղեկացվում է.

2017 թվականի հունվարի 1-ից մեկնարկել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ծառայությունների մատուցման Վարձակալության պայմանագիր, որի կողմերն են հանդիսանում Ջրային կոմիտեն՝ որպես Վարձատու և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն՝ որպես Վարձակալ:

Քաղաքացու կողմից ներկայացված խնդրի կարգավորումը գտնվում է Ջրային կոմիտեի, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և/կամ սեփականատերերի (շենքը սպասարկող լիազոր մարմնի) պատասխանատվության ներքո:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի աշխատակիցների կողմից վերակառուցվել է Մոլդովական փողոցի հ.12 հասցեի թվով երկու մուտքի արտաքին ջրահեռացման համակարգը:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից միջնորդվել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ՝ վերը նշված հասցեի կոյուղատար համակարգի խնդրահարույց հատվածների վերակառուցման հարցն ուսումնասիրելու և կարգավորելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ